Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ս.Հովհաննիսյան
14.09.2023թ.

Դասղեկ՝ Նարե Գաբրիելյան

X ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2023-2024թթ.

X ԴԱՍԱՐԱՆ

X դասարանում սովորում են 4 աղջիկ։ Աշակերտները առողջ են աշխույժ են, ակտիվ, հետաքրքրասեր, կամեցող, բարի, պատրաստակամ։ Գիտեն ընկերության բանաձևը, իրար հարգել ու օգնել։ Սիրում են իրենց դպրոցը,ուսուցիչներին, մեծ հաճույքով ու ոգևորությամբ են հաճախում դպրոց։ Դասարանում տիրում է ընկերական,ջերմ ու համերաշխ մթնոլորտ։

Հաշվի առնելով և' ժամանակակից դպրոցի սաների հետ աշխատելու դժվարությունները, և' տարիքային շրջանի հետ կապված դժվարությունները, և' դասարանի անհատական առանձնահատկությունները, որպես դասղեկ,նախընտրում եմ <<Դասղեկի ժամ>> դասաժամերը կոչել բարոյագիտության և կյանքի դասաժամեր։ Այդ դասաժամերի զրույցի և բանավեճերի թեմաներն ընտրելիս օգտվել եմ առակների տարբեր գրքերից, մանկավարժական ամսագրերից,բարոյախրատական ստեղծագործություններից՝ հաշվի առնելով 10-րդ դասարանի աշակերտների պատկերացումները և մոտեցումները։ Ավելացնեմ նաև, որ ներքևում նշված թեմաների ցուցակը միանգամայն փոփոխական է, քանի որ նպատակս է ուսումնասիրել երեխաների վարք ու բարքը, և վերացնել ու բացառել նկատված թերացումները։ Ընթացքում դասարանի վարքագիծը, ուսումնական առաջադիմության մակարդակը, կամ որպես աշակերտ նրանց պահվածքը կարող են նոր նպատակներ ծնել և թելադրել նոր ոճով ու թեմատիկայով աշխատանք։ Իսկ այդպիսի փոփոխություններն ու նորարարությունները կարտացոլվեն դասղեկի իմ օրվա պլանում։

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

- ✓ Կազմել աշակերտների անվանացանկը, հավաքել համապատասխան տեղեկատվություն:
- ✓ Սպառիչ տեղեկություններ հավաքել աշակերտների՝ լրացուցիչ կրթական հաստատություններում մասնակցության մասին
- ✓ Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան:
- ✓ Կազմակերպել ծնողական ժողովներ
- ✓ Կատարել դասղեկի ժամեր՝ համապատասխան թեմաներով զրույցներ, դասեր վարել:
- ✓ Հետևել աշակերտների վարքին,առաջադիմությանը:
- ✓ Ապահովել դասղեկ-ծնող-աշակերտ-դպրոց կապը :

Ամենօրյա աշխատանք

- ✓ Էլեկտրոնային մատյանում նշել բացակայությունները:
- ✓ Հետևել կարգապահությանը
- ✓ Հետևել հերթապահությանը դասարանում:

Ամենշաբաթյա աշխատանք

- ✓ Անցկացնել դասղեկական ժամեր
- ✓ Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Դասի համարը	Դասի թեման
1	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում, առաջարկությունների արկղիկի պատրաստում:
2	Հայրենիք, ազգ, մայրենի լեզու: Ինչքանո՞վ ենք յուրաքանչյուրս պատրաստ պահպանելու մեր ազգային որակները:
3	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:
4	Հավատ, գաղափարախոսություն, պատմություն և ժամանակ:
5	Հայաստանի հուշարձաններ: Ո՞ւր կուզենայի գնալ հաջորդ ուսումնական էքսկուրսիայի ժամանակ:
6	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:
7	Նյութապաշտություն և շահ: Անշահախնդիր նվիրում:
8	Ճակատագի՞ր, թե սեփական բախտի տնօրինում:
9	Հոգու կրթություն:

10	Հոգու կրթություն և մտքի թռիչք:
11	Ոսկե աշնան գույներն իմ խոհերում:
12	Աշնանային էքսկուրսիա : Դիտել ներկայացում Պարոնյանի անվան թատրոնում:
13	Էքսկուրսիայից ստացած տպավորության քննարկում, ներկայացման վերլուծություն:
14	Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտ հանգուցալուծումները:
15	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում:
16	Ամանորյա ջերմ մաղթանքներ և բացիկներ: Դասարանի ձևավորում:
17	Հայրենի'ք,ես զարկն եմ քո բազկի:
18	Հայոց բանակ
19	Մարմնակրթություն, առողջապահություն:
20	Հիգիենիկ հարցեր:
21	Մարդկային արատներ:
22	Մարդկային արատներ:
23	Բարոյական արժեքներ, որ իմաստավորում են մեր կյանքը:
24	Ո՞վ է հոգեպես հարուստ իմ կարծիքով:
25	Սերը որպես տիեզերական զգացմունք:
26	Հանճարները սիրո մասին:
27	Սերը ոգեշնչման աղբյուր:
28	Խրատանի, առածանի, մեկնաբանություններ:
29	Ինքնատիրապետման մի քանի հարցեր:
30	Հայոց Ցեղասպանություն: Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ:
31	Հաղթանակների ամիս մայիս:
32	Քչերը գիտեն, շատերը չգիտեն(հետաքրքիր տեղեկություններ):
33	Ո՞րն է իրական գեղեցկությունն ու հմայքը:
34	Ամփոփիչ դաս:

Ծնողական ժողովներ

Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Համառոտ բովանդակությունը

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Ամիսը	Անվանումը	Նպատակը	Վայրը	Պատասխանատու